Հավելված N 3
Պրոբացիայի ծառայության պետի
2025 թվականի հուլիսի 10-ի
N 231-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կենտրոնական մարմնի Վերասոցիալականացման և վերականգնողական բաժինը (այսուհետ՝ Բաժին) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, Ծառայության և սույն կանոնադրության հիման վրա:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Բաժնի նպատակներն են.

1) իրականացնել հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված վերահսկողության ընթացքում սոցիալական արդարության վերականգնումը, վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ՝ նաև նրանց ֆիզիկական ու հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրանց դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանումը.

2) ապահովել հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը.

3) իրականացնել հոգեբանական խորհրդատվության տրամադրման աշխատանքները.

4) ապահովել հասարակության անվտանգությունը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով.

5) իրականացնել պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) հաշտեցումը.

6) աջակցել քրեական արդարադատության իրականացմանը:

4. Բաժնի խնդիրներն են՝

1) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցի տրամադրումը.

2) պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացումը.

3) ազատությունից զրկելու հետ չկապված պատժի (հանրային աշխատանքներ) և դատարանի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կատարումը.

4) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման անհատական պլանավորումը՝ գնահատելով ռիսկերն ու հաշվի առնելով պրոբացիայի շահառուի կարիքները.

5) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) միջև հաշտարարության իրականացումը.

6) Երևան քաղաքում ու մարզերում վերասոցիալականացման ծրագրերի մշակումը և իրականացումը, ինչպես նաև համակարգում դրանց կատարումը:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների ապահովումը.

2) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցների կազմումը.

3) պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացումը.

4) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատժի (հանրային աշխատանքներ) կատարման ապահովումը.

5) դատարան միջնորդությունների ներկայացումը, դատարաններում Ծառայության անունից ներկայացուցչության ապահովումը.

6) օրինապահ վարքագծի ձևավորման, վերասոցիալականացման և կրկնահանցագործությունների նվազման նպատակով պրոբացիայի շահառուների ընդունելության, ռիսկերի և կարիքների գնահատման իրականացումը, դրա արդյունքների հիման վրա անհատական վերասոցիալականացման ծրագրերի և միջոցառումների մշակումը և իրականացնումը.

7) պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական և խորհրդատվության աշխատանքների ապահովումը, շահառուների արդյունավետ վերաինտեգրումը հասարակությունում.

8) Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող առաջարկությունների, տեղեկանքների, արձանագրությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացումը.

9) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների, վերահսկողությունների և ազատությունից զրկելու հետ չկապված պատժի (հանրային աշխատանքներ) հետ զուգահեռ կիրառվող էլեկտրոնային հսկողության կատարումը.

10) պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի ստացումը.

11) Երևան քաղաքում և մարզերում վերականգնողական ծրագրերի, այդ թվում պրոբացիայի շահառուների կրթական մակարդակի բարձրացման, մոտիվացիոն աշխատանքների իրականացման, հանցագործությունների կրկնության կանխարգելման, հասարակությունում պրոբացիայի շահառուների արդյունավետ վերաինտեգրման, հաշտարարության գործընթացի իրականացումը.

12) Երևան քաղաքում և մարզերում պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական և խորհրդատվության աշխատանքների ապահովումը.

13) հաշվետվությունների կազմումը.

14) Բաժնի գործունեությունից բխող օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացումը:

4. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Բաժնի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ծառայության պետը:

7. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Բաժնի պետը:

8. Բաժնի պետն անմիջական հաշվետու է Ծառայության պետին:

9. Բաժնի կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Բաժնի պետը, եթե օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այլ բան նախատեսված չէ:

5. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10. Բաժնի կառուցվածքում ընդգրկված չեն ներքին կառուցվածքային միավորներ: